ԱՐՏԻՍՏՈՒՀՈՒ ԱՅՑԸ

Անիի դարբասների մոտ բոլորն իջան ավտոբուսից: Ժենյա Ավետիսյանը հապաղում էր. նրան խնդրել էինք սպասել մի քիչ: Նրանք, ովքեր կինոխցիկներով էին ու լուսանկարչական սարքերով, և նրանց հետ մեր խմբին միացած տեղացի օպերատոր-թղթակիցները, սպասում էին, մինչև գյումրեցի երաժիշտները «կապահովեին» Ժենյայի ելքը ավտոբուսից և մուտքը Անիի դարբասներից ներս: Երևակայում էինք ու փորձում պատկերացնել, թե դարերը հետ են գնացել, ու ազգային տարազով ժողովրդական արտիստուհին համերգի է եկել շեն ու ծաղկուն Անի:

Ջուռնեն ձայնեց, և գյումրեցի բժիշկ Ֆելիքս Գրիգորյանը արտիստուհուն թևանցուկ ուղեկցեց դարբասներից ներս: Երաժշտությունը փոխվեց՝ «Անի» երգի երաժշտական նախամուտքին Ժենյան արդեն կանգնած էր մայր դարպասի մոտ՝ թիկունքում կեռախաչով բարձրադիր պատը, դիմացը Անին: Եվ Հովհաննես Շիրազի փառահեղ գործը հնչեց արտիստուհու հիանալի կատարմամբ.

Դեռ մի կարոտ ունեմ անհագ՝
հասնեմ Անի ու նոր մեռնեմ,
Բանամ ճամփիս դռները փակ,
տեսնեմ Անին ու նոր մեռնեմ:
Բալասանվեմ իր բաց վերքին,
մանուկ ծնեմ մեռած մորից՝
Ախուրյանի օրորի տակ, փրկեմ Անին՝
կարոտս առնեմ:
Օրոցք դնեմ իղձերն հայոց՝
հայոց հույսերն օրորելով,
Որպես որդուն իմ երկվորյակ՝ երկնեմ Անին՝
կյանքն օրորեմ:
Ախուրյանի ջրերի պես մորս փեշերն համբուրելով՝
Լցված կյանքով հազարազանգ՝
գրկեմ Անին, վերածնվեմ:
Կրծքիս սեղմեմ Անիս ավեր,
բուերի տեղ սոխակ դառնամ,
Դառած երգ ու վարդի քաղաք՝
երգեմ Անին ու նոր մեռնեմ:
Վանա ծովի ու Վանի հետ
ու Ղարսի հետ ու Մասիսի՝
Իմ Սևանի լույսերի տակ զուգեմ Անին՝
օջախ վառեմ:
Ծաղկեցնեմ շիրիմն անգամ
արքայաշուք իմ պապերի,
Որպես անտառ կաղնեպսակ՝
տնկեմ Անին՝ Վանին խառնեմ:
Ավեր թողնեմ միայն Քյոշքը
թուրք չարահուշ բռնակալի,
Գլխին հայոց արևաթագ՝ ոսկեմ Անին,
բերդն համբուրեմ:
Հազարազանգ զարթնեցնեմ
հազարամյա իր խոր քնից՝
Արագածի պես անխորտակ բուրգեմ Անին,

վեր պարսպեմ:
Վեր փյունիկեմ հազար ու մի տաճարներով
իր ավերակ,
Մայր տաճարի գմբեթի տակ խնկեմ Անին,
կյանք բուրվառեմ:
Թագադրեմ սրտիս թագով մանուկ Գագիկ թագավորին,
Հազար ու մի զանգով՝ հսկակ զանգեմ Անին՝
վեր ղողանջեմ:
Մայրաքաղաք Երևանին Անին դարձնեմ մայրաքաղաք,
Պալատներով իր նորաթագ վեմեմ Անին՝ կյանքի կոչեմ:
Վերաշինեմ շիրմի մատուռն սպարապետ Պահլավունու,
Վեմեմ բուրգերն ու աշտարակ, ճեմեմ Անին ու նոր ննջեմ:
Բանտից հանեմ մեծ Հայաստանն՝
այս ազատված փոքրիս խառնեմ,
Գրկելով հողն իմ բովանդակ՝ հայկեմ Անին ու նոր մեռնեմ:
Հայոց թագի շափաղն հասնի Վանա ծովի մութ վահանին,
Առագաստեմ ծովերս անտակ, թագեմ Անին, թագավորեմ:
Հազար տարվա կարոտ ունի իմ երազը հազարաթև՝
Ամ, թեկուզ լուռ, դեռ ավերակ տեսնեմ Անին՝
ու նոր մեռնեմ:
Որպես ոսկի վաղվա գուշակ,
որպես Մասիսին իմ անուշակ,
Գլխին հայոց մի դրոշակ տեսնեմ Անին… ու չմեռնեմ:

(Ես միտումնավոր մեջբերեցի նախերգանքն ամբողջությամբ, որպեսզի այս գիրքը փառահեղ պոեմի հանդեպ երիտասարդության շրջանում հետաքրքրությունը մեծացնելու յուրովի առիթ դառնա, քանզի հիմա այնքան էլ հեշտ չէ Հովհաննես Շիրազի գրքերը ճարելը):

Տեսարանը շքեղ էր՝ հնամենի Անիի ֆոնին Հայաստանի ժողովրդական արտիստուհին, ազգային տարազով, աստունք ու երգ էր «բերել» իր նախնիների քաղաք: «Դահլիճը» Անիի ավերակ եկեղեցիներն էին, հանդիսատեսը՝ ուխտավորներս:

Երբ ավարտվեց «համերգը», Ֆելիքս Գրիգորյանը, որ մի տեսակ Ժենյային ուղեկցելու շեֆությունն իր վրա էր վերցրել, առաջարկեց տարազը փոխել, որ Անիում շրջելը դյուրին լինի: Թուրք խմբագիր-օպերատորները, ովքեր անցած երեկո հյուրանոցի նախասրահում արդեն ծանոթացել էին Ժենյայի հետ, չէին բաժանվում արտիստուհուց:

– Ապագա տեսաֆիլմիդ համար լավ կադրեր կունենաս,-ասացի Պեդիրին:

– Ֆիլմ չէ, բայց առանձին հաղորդում անպայման կլինի. Հայաստանի ժողովրդական արտիստուհիների միշտ չէ, որ հանդիպում ենք:

Երեկ երեկոյան նրանք նկարահանում էին Ժենյային, երբ վերջինս գյումրեցի երաժիշտների հետ իր ծրագրից մի քանի երգերի փորձն էր անում՝ Կարսի նահանգային հեռուստատեսությամբ ցուցադրելու համար: Այդ առաջարկը նրան արել էր

հեռուստատեսության տնօրեն Ալիջանը: «Կարսեցիների համար հաճելի կլինի,-ասել էր նա,- եթե հայ արտիստուհին մեկ-երկու համարով ներկայանա մեր հեռուստակայանի համերգային ծրագրում»:

Ժենյան սիրով համաձայնել էր ու երաժիշտների հետ մինչ ուշ գիշեր փորձում էր կատարելիք իր երգերը: Խմբագիր-օպերատորները, որ Ալիջանի աշխատակիցներն էին, նկարահանում էին, որպեսզի հետո, համերգի ընթացքում, որոշ կադրեր համադրեն այն տեքստին, որ պիտի ներկայացվեր որպես մուտքի խոսք: Ժենյայի համար այդ հրավերն անակնկալ էր, բայց և ընդունելի:

Ու հիմա, կամովին իր ուղեկիցը դարձած, թուրք օպերատորների հետ Ժենյան անցնում էր եկեղեցուց-եկեղեցի՝ ինքն իր մտորումների, իր տրտմության հետ՝ Անիի հետ իր ներքին «երկխոսությունը» երբեմն բարձրաձայնելով, որ համեմված էր Անիին նվիրված քնարական գործերով:

…Երեկոյան Կարսի քաղաքային հեռուստաընկերությունում համերգը ինչ-ինչ պատճառներով չկայացավ: Ալիջանը խուսափեց բացատրություններ տալ, բայց Ժենյան էլ, մենք էլ հասկանում էինք, որ նման «պատահականություններ» կարող են լինել: Բայց փորձն անտեղի չանցավ. չարենցյան երեկոն, որ ուխտավորներիս հավաքել էր հյուրանոցի ռեստորանում, հրաշալիորեն լցվեց Ժենյայի ասմունքով ու երգով, և դա իսկական տոն էր բոլորիս համար, որ այդ երեկո հավաքվել էինք Եղիշե Չարենցի ծննդյան օրը նշելու:

Շարունակելի